

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ /

/ Տ. Բակլաջյան

1.09.2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ
ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ IIIա

ԴԱՍՂԵԿ՝ Ն. Տոնյան

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

1. Դասարանը բաղկացած է 29 հոգուց: Բոլորն էլ դպրոց են հաճախում պատրաստված՝ իրենց ունակություններին համապատասխան:

Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են:

Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

Հաշվի առնելով և՛ ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և՛ տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և՛ դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ, նախընտրում եմ „Դասղեկի ժամ“, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի գրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, „Մտքի հրավառություն“, գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին ,

որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով

կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2

Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում:

Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ:

Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3

Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վեբաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը,

որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերու ակտիվություն : Բացատրել և պահանջել ,

որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոձեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5

Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6

Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան,

որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:

Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի

մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

Ուսումնադաստիրակչական աշխատանքի բովանդակությունը

I կիսամյակ

Աշխատանքի ուղղվածությունը	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Աշակերտների մոտ զարգացնել գեղագիտական, ֆիզիկական, Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը;	Կահավորել դասասենյակը համաձայն համաճարակային ուղեցույցի: Տեղեկացնել աշակերտներին ուղեցույցի մասին: Տարվա համար կազմել հերթապահության ցուցակ: Ապահովել աշակերտ-դպրոց-ծնող սերտ կապը: Կատարել Սեպտեմբերի 15-ից մինչև 20-ը:	Զրույց նվիրված ուսուցչի տոնին: Կատարել 1-ից 5-ը Դասալսումների կատարում տարբեր առարկաներից: Կատարել 10-20-ը:	Համագործակցում դասավանդող ուսուցիչների հետ: Ստուգել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակը: Կատարել նոյեմբերի 1-15-ը:	Զրույց, քննարկում երկրաշարժի և բնական այլ աղետների մասին: <<Սպիտակի երկրաշարժ Կատարել դեկտեմբերի 5-ից 10-ը: Զրույց Նոր տարվա և դրա խորհրդի մասին: Կատարել 15-20-ը:

II կիսամյակ

Աշխատանքի ուղղվածությունը	հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Խնդիրները՝ Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության, ձևավորում, հարգանք իր երկրի	«Հայոց բանակի կազմավորումը» զրույց: կատարել 15-ից-18-ը: Հին տոմարով Նոր տարի	Աշակերտները կմասնակցեն համադպրոցական միջոցառմանը՝ <u>Տյառնընդառաջ</u> :	Զրույց մայրության և գեղեցկության վերաբերյալ: Կատարել 7-ից 9-ը	Աշակերտները կմասնակցեն Հայոց ցեղասպանության նվիրված համադպրոցական միջոցառմանը՝ <<Հիշում եմ և պահանջում>>	Մայիսյան եռատոն: Ուսումնական տարվա ավարտը, ձեռքբերումները:	Ինչ ձեռք բերեցի այս տարվա ընթացքում

մշակույթի և պատմության հանդեպ:	զրույց, քննարկում:			Խորագրով :		
--------------------------------------	-----------------------	--	--	------------	--	--

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը
Սեպտեմբեր 7	Նոր ուստարվա անելիքների ծրագրում:	Ինչպե՞ս է կազմակերպել դասընթացները համավարակի պայմաններում:
Նոյեմբեր	Աշակերտների առաջադիմությունը և կարգապահությունը	Հետևողական լինել երեխաների պատրաստվածությանը և կարգապահությանը:
Հունվար	II կիսամյակի անելիքների ծրագրում:	Ինչպե՞ս միասին կազմակերպել 2- րդ կիսամյակի անելիքների
Ապրիլ	Աշակերտների առաջադիմությունը և կարգապահությունը	Հետևողական լինել երեխաների պատրաստվածությանը, առաջադիմությ անը